ՎԵՐԱՕԾՎԵՑ ԲԵԺԱՆՈ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻՆ

Օգոստոսի 17-ին, ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի և մասնակցությամբ Սամցխե-Ջավախքի առաջնորդական ընդհանուր փոխանորդ Տ. Բաբկեն աբեղա Սալբիյանի ու Նինոծմինդայի շրջանի հայության հոգևոր հովիվ Տ. Արմաշ քահանա Պողոսյանի, վերաօծվեց Ախալքալաքի շրջանի Բեժանո գյուղի Սուրբ Մինաս եկեղեցին, որը վերանորոգվել էր ծագումով նույն գյուղից Վասիլ և Վանիկ Սարգսյան եղբայրների նյութական օժանդակությամբ:

Սուրբ Պատարագի ավարտին, որ մատուցվեց Ախալքալաքի շրջանի հայության հոգևոր հովիվ Տ. Սամվել քահանա Թորոսյանի ձեռամբ, առաջնորդ Սրբազան Հայրը գնահատանքի և օրհնության իր խոսքն ուղղեց եկեղեցու վերականգնման գործում զգալի ներդրում կատարած Սարգսյանների ընտանիքին, ինչպես նաև շինարարական աշխատանքներին իրենց մասնակցությունը բերած բոլոր ներկաներին՝ նրանց փոխանցելով առաջնորդական Օրհնության գիր և հուշանվերներ:

Արարողությունն ավարտվեց ավանդական մատաղի օրհնությամբ և ժողովրդական երգ ու պարով:

Ուրախալի այս առիթով ներկա էին ՀՀ վարչապետի խորհրդական Ստեփան Մարգարյանը, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Շիրակ Թորոսյանը, եկեղեցու բարերար Վասիլ Սարգսյանը, Ախալքալաքի շրջանային սակրեբուլոյի նախագահ Խաչատուր Այվազյանը և տեղական իշխանության ներկայացուցիչներ:

Նշենք, որ Բեժանոյի՝ սկզբնապես քարաշեն և փայտածածկ Սուրբ Մինաս եկեղեցին հիմնադրվել է 1830-ական թվականներին: 1899 թվականի երկրաշարժից բավականաչափ վնասվել է՝ դառնալով վթարային կառույց: Խոնարհված եկեղեցին վերջին անգամ վերանորոգվել էր 1906 թվականին:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԴԻՎԱՆ